

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/6**

ք. Երևան

07.12.2017թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Բաղդասարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Կոտայքի մարզի ք. Աբովյանի հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարանի հիմնանորոգման աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 2017 թ. նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակում կատարվող աշխատանքների համար կատարման վերջնաժամկետ է սահմանվում 10.06.2018 թ.:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե Աշխատանքի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սույն պայմանագրի N 4.2 Հավելվածով սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության (Հավելված N 4) ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ծեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները:

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կարգով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:

4.7 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 203500000 (երկու հարյուր երեք միլիոն հինգ հարյուր հազար, այսուհետև՝ պայմանագրի ընդհանուր գումար) ՀՀ դրամ, որից՝ 33916667 (երեսուներեք միլիոն ինը հարյուր տասնվեց հազար վեց հարյուր վաթսույոթ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Սույն պայմանագրի 1.3 կետով սահմանված ժամկետում Կապալառուի կողմից N 1.1 հավելվածով նախատեսված՝ նախագծանախահաշվային փաստաթղթերին համապատասխան իրականացվելիք աշխատանքների դիմաց վճարման ենթակա գումարը կազմում է 48971596 (քառասունութ միլիոն ինը հարյուր յոթանասունմեկ հազար հինգ հարյուր ինսունվեց) ՀՀ դրամ (այսուհետև՝ պայմանագրային գումար), որից՝ 8161933 (ութ միլիոն հարյուր վաթսունմեկ հազար ինը հարյուր երեսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

Պայմանագրի ընդհանուր գնի և պայմանագրային գումարի միջև տարբերության չափով աշխատանքները կկատարվեն դրանց համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Աշխատանքի կատարման համար տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի:

5.1.2 Պայմանագրային գումարից մինչև 48971596 (քառասունութ միլիոն ինը հարյուր յոթանասունմեկ հազար հինգ հարյուր ինսունվեց) ՀՀ դրամը Պատվիրատուն՝ պայմանագրի կանխավճարի ապահովումը հիմնավորող փաստաթղթի առկայության դեպքում, փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է ներկայացված հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրային գումարի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

5.1.3 Կողմերի միջև փոխադարձ համաձայնեցված կարգով՝ վերոհիշյալ համաձայնագրով կարող է նախատեսվել կանխավճար:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով՝ անկանխիկ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3

Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 20.12.2017թ.՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.5 Սույն պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի տեսակի սահմանված միավոր գինն է.

ՎԳՏ - ծավալաթերթ-նախահաշվով սահմանված առանձին տեսակների (տողերի) դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՎԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի

համայնատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.5 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.6 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.7 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կապալառուի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.8 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով. Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.10 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 4, N 4.1 և N 4.2 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.11 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՅՅԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի թ ա տ ու ՝

«Հ կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
«Հ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011807
ՀՎՀՀ 02565827

Կ ա պ ա լ ա ռ ու ՝


««Տրանսունիվերսալ»» ՓԲԸ
ք. Երևան, Ջավադյան 13/1,
Կոնվերսբանկ ՓԲԸ,
Հ/Հ 1930065126540100
ՀՎՀՀ 03300028

Աշխատակազմի ղեկավար՝

Տնօրեն՝



Ա. Մկրտչյան
Կ.Տ.



Ա. Բաղդասարյան
Կ.Տ.

Ծ Ա Վ Ա Լ Ա Թ Ե Ր Թ-Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

ՀՀՀ Կոտայքի մարզի ք. Արսիվանի հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարանի
 հիմնանորոգման աշխատանքների

(2017 թ. Առկա ֆինանսական միջոցների շրջանակներում)

Գ/հ	Աշխատանքի անվանումը	Զ/մ	Քանակ	Արժեքը, հազ. դրամ	
				միա-վորի	ընդամենը
1	2	3	4	5	6.000
1. Համաշինարարական աշխատանքներ					
1. Քանդման աշխատանքներ					
1	Ալյումինե դռների ապամոնտաժում (1,0x2,1մ 3հատ, 1,75x2,3մ 1հատ, 1,5x2,1մ 1հատ)	մ ²	13.475	3.465381	46.696
2	Մետաղական դռան ապամոնտաժում (1,5x2,1մ 1հատ)	մ ²	3.15	3.6356701	11.452
3	Ալյումինե պատուհանների ապամոնտաժում (1,85x2,05մ 6հատ, 5,4x2,05մ 3հատ, 1,2x1,2մ 5հատ, 1,95x0,7մ 2հատ, 5,4x0,7մ 1հատ, 5,25x1,5մ 1հատ, 0,4x0,6մ 2հատ, 0,3x1,2մ 3հատ)	մ ²	79.11	3.465381	274.146
4	Փայտե պատուհանի ապամոնտաժում (0,3x3,6մ 1հատ)	մ ²	1.08	1.87444845	2.024
5	Մետաղական կարկասով ապակեպատ երդիկի ապամոնտաժում	մ ²	47.76	6.48786	309.860
6	Փայտե դռների քանդում	մ ²	37.3	1.17300225	43.753
7	Ապակեպատ վիտրաժի քանդում	մ ²	28	6.48786	181.660
8	Մետաղական ճաղավանդակների ապամոնտաժում	տ	4	21.518049	86.072
9	Տուֆե շարվածքով պատերի քանդում (55+4,0+30)մ ³	մ ³	89	7.66445	682.136
10	Բազալտե շարվածքով պատերի քանդում	մ ³	4.23	7.66445	32.421
11	Գլխավոր մուտքի հենապատի բազալտե սալերի քանդում	մ ²	4.8	4.0917695	19.640
12	Բազալտե արտաքին աստիճանների քանդում նախաշերտով	մ	40.8	1.3140501	53.613
13	Խամքարե հիմքերի քանդում	մ ³	4	11.0759	44.304
14	Բետոնե հատակների քանդում	մ ³	10	15.313745	153.137
15	Քարե սալիկներից հատակների քանդում	մ ²	10	0.62036555	6.204
16	Մանրատախտակե հատակների քանդում	մ ²	184	0.54674345	100.601
17	Կերամիկական սալիկներից հատակների քանդում	մ ²	21.9	0.4314487	9.449
18	Ցեմենտավազե հարթաշերտի քանդում	մ ²	430	0.41305455	177.613
19	Բետոնե նախաշերտի քանդում H=60մմ (430մ ²)	մ ³	7.2	15.313745	110.259
20	Տանիքի տակի գոյություն ունեցող նրբատաշ տախտակով երեսապատվածքի քանդում	մ ²	8.5	0.2826933	2.403
21	Հարթ տանիքի ջրամեկուսիչ շերտի քանդում	մ ²	30.6	0.17838395	5.459

22	Պատերի գաջե սվաղի քանդում	մ ²	270	0.1865483	50.368
23	Պատերի հախճասալիկների քանդում ներքնաշերտով	մ ²	70	0.604695	42.329
24	Պատերի ցեմենտավազե սվաղի քանդում	մ ²	107	0.1865483	19.961
25	Պատերի մաքրում լատեքսային ներկից	մ ²	589	0.201565	118.722
26	Պատերի լամինացված վահաններով երեսպատվածքի քանդում	մ ²	245	0.6288785	154.075
27	Միջնորմների քանդում	մ ²	6.5	7.66445	49.819
28	Բազալտե սալվածքի քանդում (պահեստավորում հետագա օգտագործման համար)	մ ²	585	1.3738009	803.674
29	Ասֆալտբետոնե ծածկույթի քանդում	մ ²	10	0.4221737	4.222
30	Խճի նախաշերտի քանդում	մ ³	58.5	0.462333	27.046
31	Բազալտե եզրաքարերի քանդում հիմքով (պահեստավորում հետագա օգտագործման համար)	մ	150	0.886886	133.033
32	Բետոնե արտաքին աստիճանների և հարթակի քանդում	մ ³	3.5	15.313745	53.598
33	Բազալտե աստիճանասալերի քանդում բետոնե նախաշերտով	մ ³	15.9	22.212205	353.174
34	Ջրագծի մետաղական խողովակների ապամոնտաժում Φ15-32մմ	մ	60	0.3411991	20.472
35	Խեցե զուգարանակոնքերի ապամոնտաժում	հատ	2	0.616436	1.233
36	Խեցե լվացարանակոնքերի ապամոնտաժում	հատ	2	0.5464425	1.093
37	Թուջե խողովակների ապամոնտաժում Φ50-100մմ	մ	20	0.87428765	17.486
38	Թուջե ջեռուցման մարտկոցների ապամոնտաժում	հատ	15	0.9695255	14.543
39	Կոնվեկտորների ապամոնտաժում	հատ	40	0.762418	30.497
40	Ջեռուցման խողովակների ապամոնտաժում Φ15-32մմ	մ	550	0.3411991	187.660
41	Նույնը, Φ40-50մմ	մ	160	0.5896783	94.349
42	Շինաղբի բարձուն մեխանիզմով ա/ինքնաթափի վրա	տ	690	1.02796	709.292
43	Նույնը, ձեռքով	տ	10	0.725634	7.256
44	Շինաղբի տեղափոխում 5կմ	տ	700	1.28495	899.465
2. Նոր բացվածքների ուժեղացում 5,5x2,3մ և 5,5x2,9(Մ)մ					
1	Բացվածքների վերնամասում երկու կողմից ակոսների փորում	մ	24	0.315446	7.571
2	N24 շվեյների տեղադրում ակոսներում (24գծմ)	տ	0.576	555.982167	320.246
3	Անցքերի շաղափում քարե պատերում Φ15մմ, L=350մմ	հատ	132	0.3947643	52.109
4	Φ12A500C դասի ամրանաձողերի խարսխում անցքերում պոլիմերցեմենտե շաղախի ներարկմամբ	տ	0.041	342.7666576	14.053

5	Բացվածքների եզրակալում տաշտածն հեծանով և եռակցվող պողպատաշերտով (տաշտածն հեծան N16՝ 0298տ, պողպատաշերտ 40x4մմ՝ 0,071տ, քիթեղ 500x120x6մմ՝ 0,0108տ)	տ	0.38	593.549685	225.549
6	Ակոսների բետոնացում B15 դասի բետոնով	մ ³	1.6	167.7383818	268.381
7	Ուժեղացված բացվածքների սվաղ ցեմենտավազե շաղախով, լարացանցի տեղադրմամբ	մ ²	19.2	2.924651324	56.153
3. Աստիճանավանդակի և /Դ, 10 առանցքով/ արտաքին պատի միակողմանի					
1	Փ12մմ, L=600մմ խորությամբ միջանցիկ անցքերի շաղախում քարե պատերում 600-900մմ քայլով (երկկողմանի ուժեղացում)	հատ	776	0.59471635	461.500
2	Պոլիմերցեմենտային սոսնձամածիկի ներարկում անցքերի մեջ	մ ³	0.19	640.101248	121.619
3	Ամրանային ձողերի խարսխում անցքերի մեջ Փ12A500C դասի	տ	0.055	352.9925549	19.415
4	Նույնը, Փ10A500C դասի	տ	0.239	357.7520457	85.503
5	Պատերի վրա ամրանացանցերի և ուղղահայաց ամրանաձողերի տեղադրում խարսխաձողերի հետ եռակցակապելով	տ	1.93	92.745545	178.999
6	Փ8Ac-I դասի ամրանացանցի արժեքը (150x150մմ բջիջով)	տ	1.263	325.7683127	411.445
7	Փ12A500C դասի ուղղահայաց ամրանաձողերի արժեքը	տ	0.71	321.0088219	227.916
8	Շարվածքի կարանների ճաքերի ու դատարկությունների լցափակում պոլիմերցեմենտային սոսնձամածիկով (0,5-2մմ	մ ³	0.5	640.101248	320.051
9	Պատերի միակողմանի ուժեղացում տորկրետացման եղանակով 40մմ հաստությամբ ամրանացանցի վրայից	մ ²	68	4.430325313	301.262
10	Պատերի երկկողմանի ուժեղացում տորկրետացման եղանակով 40մմ հաստությամբ ամրանացանցի վրայից	մ ²	479.4	4.430325313	2123.898
11	Արտաքին գույքային տախտակամածի տեղադրում և քանդում պատերի ուժեղացման համար (H=12մ) (նյութերը օգտագործել 3 պտույտի հաշվարկով՝ 114մ ² համար)	մ ²	479.4	0.495136784	237.369
12	Անցքերի շաղախում քարե պատերում Փ14մմ, L=350մմ	հատ	188	0.3947643	74.216
13	Ամրանախարսխի տեղադրում անցքերի մեջ նախապես պոլիմերցեմենտով ներարկված ամրանացանցի ամրացում և ձեփասվաղում δ=50մմ (34մ ³)	մ ²	68	3.768994604	256.292
14	Ամրան Փ12A500C դասի	տ	0.159	310.7022986	49.402
15	Ամրան Փ8AcI դասի	տ	0.358	317.0482864	113.503
4. Ե/բ հիմնատակի սալ, հատակի սալ և ե/բ պատեր					
1	Խճի նախաշերտ H=15սմ և H=10սմ (1,2+2,8)մ ³	մ ³	4	7.10818312	28.433
2	Միաձույլ ե/բ հիմնատակի սալ B20 դասի բետոնից	մ ³	4.17	45.97318372	191.708
3	Ամրան A500C դասի (Փ10)	տ	0.01	426.4252656	4.264
4	Ամրան A500C դասի (Փ16)	տ	0.14	310.7022986	43.498
5	Միաձույլ ե/բ հատակի սալ B20 դասի բետոնից	մ ³	2.8	40.77789518	114.178
6	Ամրանացանց Փ6AcI դասի ամրանից	տ	0.062	317.0482864	19.657
7	Միաձույլ ե/բ պատ B20 դասի բետոնից	մ ³	18.86	61.14900941	1153.270
8	Ամրան AcI դասի (Փ8)	տ	0.255	317.0482864	80.847
9	Ամրան A500C դասի (Փ16)	տ	0.255	310.7022986	79.229

5. Ծածկի սալի ուժեղացում					
1	Ծածկի սալում անցքերի բացում, ամրանների խարսխում բետոնով, ամրանացանցի փռում և բետոնացում վրայից B25 դասի բետոնով	մ ³	11.34	88.67092526	1005.528
2	Ամրան Acl դասի (Փ6)	տ	0.762	317.0482864	241.591
6. Տանիք					
1	Գոլորշամեկուսացում 1 շերտ ստանդվող իզոգամով	մ ²	50	1.756711882	87.836
2	Ցեմենտավազե հարթաշերտ H=20մմ	մ ²	50	0.810136126	40.507
3	Ջերմամեկուսացում խարամի շերտով H=150մմ	մ ³	7.5	6.493510267	48.701
4	Տանիքի արտաքին կախովի ջրհորդան ցինկապատ փոշեներկված թիթեղից	մ	171	8.532614684	1459.077
5	Տանիքի փայտե կոնստրուկցիաների տեղադրում, մշակված	մ ³	1.6	221.6150918	354.584
6	Տանիքի կավարամածի պատրաստում 50x50մմ փայտե չորսուններից (0,42մ ³)	մ ²	60	1.71350815	102.810
7	Տանիքի տախտակամածի պատրաստում 50x150մմ տախտակներից (2,25մ ³)	մ ²	45	9.362035037	421.292
8	Փայտե կրող կոնստրուկցիաների հակահրդեհային պաշտպանություն	մ ³	1.6	7.31051891	11.697
9	Փայտե տախտակամածի և կավարամածի մշակում հակաճեխիչ քսուրով	մ ²	105	0.330819084	34.736
10	Նույնի հակահրդեհային պաշտպանություն	մ ²	105	0.227431081	23.880
11	Տանիքի ծածկույթ ցինկապատ փոշեներկված հարթ թիթեղից	մ ²	105	1.123834736	118.003
12	Քիվերի ցինկապատ փոշեներկված հարթ թիթեղ B=540մմ, L=15,5մ	մ ²	8.4	1.299254686	10.914
13	Ջրահեռացման ցինկապատ փոշեներկված խողովակներ Φ 100մմ, H _{միջ} =5,6մ (H=3մ 15 հատ, H=7,3մ 9 հատ, H=6,8մ 7 հատ, H=10,4մ 3 հատ)	կ-տ	34	28.06276581	954.134
14	Չնապաշտպան արգելք ցինկապատ փոշեներկված թիթեղից	մ	115	3.011488944	346.321
15	Տանիքի անվտանգության բռնածողերի մոնտաժում	տ	0.205	513.4958249	105.267
16	Տանիքի տակի գոյություն ունեցող նրբատաշ տախտակով երեսպատվածքի լաքապատում	մ ²	82.5	1.244346857	102.659
17	Տանիքի տակի նոր սրբատաշ տախտակի երեսպատվածք	մ ²	25.5	6.675614009	170.228
18	Նույնի երկշերտ լաքապատում	մ ²	25.5	1.244346857	31.731
19	Խոռոչների բացում քարե պատերում 150մմ խորությամբ 100x100մմ (30 հատ)	մ ² խորշ	0.3	9.0285105	2.709
20	Ծածկի մետաղական կառուցվածքների մոնտաժում ուղղանկյուն խողովակներից (710,5կգ)	մ ² ծածկ	100	2.469017132	246.902
21	100x100x3մմ խողովակի արժեքը (800կգ)	մ	87.6	4.10891292	359.941
22	20x30x2մմ խողովակի արժեքը (287կգ)	մ	198.4	0.821782584	163.042
23	Մետաղական կառուցվածքների երկշերտ ներկում հակակոռոզիոն ներկով	մ ²	38.3	0.972470094	37.246
24	Խոռոչների լցվակում B25 դասի բետոնով	մ ³	0.47	141.1203874	66.327
7. Ներքին միջնապատեր					

1	Ներքին պատերի շարվածք 400x200x200մմ պեմզաբլոկներից (300մ ²)	մ ³	60	19.37340402	1162.404
2	Նույնը, 400x200x100մմ պեմզաբլոկներից (33մ ²)	մ ³	3.3	24.22991082	79.959
3	Շարվածքի ամրանավորում	տ	0.8	59.581532	47.665
4	Ամրան Acl դասի (Φ8)	տ	0.2	317.0482864	63.410
5	Ամրան A500C դասի (Φ14)	տ	0.6	310.7022986	186.421
6	Անցքերի լցափակում մանրախիճ բետոնով B12,5 դասի	մ ³	18	30.76370686	553.747
7	Միաձույլ ե/բ բարավորներ B15 դասի բետոնից	մ ³	1.1	73.82938651	81.212
8	Ամրան Acl դասի (Φ8)	տ	0.038	317.0482864	12.048
9	Ամրան A500C դասի (Φ16)	տ	0.135	310.7022986	41.945
10	Ուղղաձիգ և հորիզոնական կարանների փակում δ=2սմ փրփրապլաստե սալերով	մ ²	40	0.475389902	19.016
8. Փիպաստվարաթղթե սալերից միջնորմներ					
1	Միջնորմների իրականացում ցինկապատ պրոֆիլներից կարկասով δ=75մմ ձայնա-ջերմամեկուսիչ հանքային բամբակե միջադիրով, երկու կողմից երեսպատված δ=12,5մմ գիպաստվարաթղթե սալերով	մ ²	80	6.736058361	538.885
2	Միջնորմների իրականացում ցինկապատ պրոֆիլներից կարկասով δ=75մմ ձայնա-ջերմամեկուսիչ հանքային բամբակե միջադիրով, մեկ կողմից երեսպատված δ=12,5մմ գիպաստվարաթղթե սալերով	մ ²	20	5.019174641	100.383
9. Կախովի առաստաղներ					
1	Կախովի առաստաղ շերտավոր պլաստմասսայե հիմնակմախքի պատրաստմամբ	մ ²	6.59	4.400763156	29.001
2	Կախովի առաստաղ գիպաստվարաթղթե հարթասալերից δ=12,5մմ հիմնակմախքի պատրաստմամբ	մ ²	919.72	3.285878117	3022.088
3	Կախովի առաստաղ գիպաստվարաթղթե հարթասալերից	մ ²	137.03	5.7540568	788.478
4	Բաց պատշգամբների կախովի առաստաղ խոնավակայուն գիպաստվարաթղթե սալերից δ=12,5մմ հիմնակմախքի պատրաստմամբ	մ ²	63	4.391746375	276.680
5	Նույնի ներկում ջրակայուն ճակատային ներկով	մ ²	63	1.256124368	79.136
10. Ներքին աստիճանահարթակ					
1	Անցքերի բացում գրանիտե հատակի վրա L=150մմ, Φ25մմ	հատ	27	0.744199235	20.093
2	Անցքերի մեջ պոլիմերցեմենտե շաղախի ներարկում	մ ³	0.002	57.889425	0.116
3	Պոլիմերցեմենտե շաղախի արժեքը	կգ	2	0.57068235	1.141
4	Մետաղական ձևավոր ճաղաշարի պատրաստում և մոնտաժում (համահունչ գոյություն ունեցողին) (պողպատե ձող 12x12մմ, շերտավոր պողպատ 30x5մմ)	տ	0.066	644.445521	42.533
5	Փայտե լաքապատ բռնածողի տեղադրում	մ	4.2	2.582260936	10.845
6	Մետաղական ճաղերի ներկաստառում նախաներկով	մ ²	3.6	0.147869737	0.532
7	Նույնի երկշերտ յուղաներկում	մ ²	3.6	1.082058226	3.895
8	Գոյություն ունեցող ճաղերի մաքրում և յուղաներկում նախաներկմամբ	մ ²	30	2.271291726	68.139

9	Գոյություն ունեցող փայտե բռնածողերի փոխարինում նոր փայտե լաքապատ բռնածողով	մ	43.1	2.770069286	119.390
10	Աստիճանների երեսպատում գրանիտե սալիկներով, սոսնձով	մ ²	3	31.30017959	93.901
11	Շրիշակներ գրանիտե սալիկներոց H=15սմ	մ ²	3.7	30.50414935	112.865
11. Բեմահարթակ օդափոխության անցքերով					
1	Բեմահարթակի տափաստներ 250x100սմ չորսուներից (0,55մ ²) (ռուբերոիդ՝ 15մ ²)	մ ²	43.72	178.2660865	7793.793
2	Հոծ տախտակամած 150x70սմ տախտակներից, ներառյալ աստիճանները	մ ²	43.72	13.05901624	570.940
3	Փայտե կոնստրուկցիաների մշակում հակահրդեհային և հականեխիչ նյութով	մ ²	43.72	0.563389965	24.631
4	Հատավոր մանրատախտակ սոսնձով	մ ²	44	7.629895239	335.715
5	Բեմահարթակի հղկում և լաքապատում հրակայուն լաքով, ներառյալ շրիշակները	մ ²	48.4	1.334593191	64.594
12. Արտաքին պատեր					
1	Արտաքին պատերի շարվածք 400x200x200սմ պեմզաբլոկներից	մ ³	23.8	19.37340402	461.087
2	Շարվածքի ամրանավորում	տ	0.187	59.581532	11.142
3	Ամրան Acl դասի (Փ8)	տ	0.039	317.0482864	12.365
4	Ամրան A500C դասի (Փ12)	տ	0.148	310.7022986	45.984
5	Անցքերի լցափակում մանրախիճ բետոնով B12,5 դասի	մ ³	4.74	30.76370686	145.820
6	Միաձույլ ե/բ գոտի B20 դասի բետոնից	մ ³	0.72	57.59241673	41.467
7	Ամրան Acl դասի (Փ8)	տ	0.035	317.0482864	11.097
8	Ամրան A500C դասի (Փ16)	տ	0.114	310.7022986	35.420
9	Միաձույլ ե/բ բարավորներ B20 դասի բետոնից	մ ³	0.45	76.1579417	34.271
10	Ամրան Acl դասի (Փ8)	տ	0.018	317.0482864	5.707
11	Ամրան A500C դասի (Փ16)	տ	0.061	310.7022986	18.953
12	Պատերի շարվածք տուֆ քարով (օգտագործել քանդված քարերը)	մ ³	16	13.6283768	218.054
13	Շարվածքի ամրանավորում ցանցով Փ6Acl դասի ամրանից	տ	0.05	408.3369297	20.417
13. Արտաքին այլումինե դռներ					
1	Այլումինե, կաղնեգույն պրոֆիլներից, ջերմակամրջակով խուլ դռներ, ներառյալ սարքերը (0,9x2,1մ՝ 1 հատ, 1,0x2,1մ՝ 3 հատ, 0,95x2,1մ՝ 2 հատ)	մ ²	12.18	70	852.600
2	Այլումինե, կաղնեգույն պրոֆիլներից, ջերմակամրջակով, ապակեփաթեթով, միափեղկ դռներ, ներառյալ սարքերը (0,9x2,3մ՝ 2 հատ)	մ ²	4.14	80	331.200
3	Այլումինե, կաղնեգույն պրոֆիլներից, ջերմակամրջակով, ապակեփաթեթով, երկփեղկ դռներ անշարժ վերնափեղկով, ներառյալ սարքերը (1,75x2,95մ՝ 2 հատ) (դուռ 8,4մ ² , վերնափեղկ՝ 1,92մ ²)	մ ²	10.32	74.418638	768.000
4	Այլումինե, կաղնեգույն պրոֆիլներից, ջերմակամրջակով, ապակեփաթեթով, կամարածև դռներ, ներառյալ սարքերը (0,9x2,1մ՝ 1 հատ, 1,35x2,8մ՝ 1 հատ)	մ ²	5.67	75.8325	429.970

5	Այլումինե, կաղնեգույն պրոֆիլներից, ջերմակամրջակով, ապակեփաթեթով, կամարածն վիտրաժ երկփեղկ բացվող դռնով, ներառյալ սարքերը (1,3x3,55մ 1 հատ)	մ ²	5.46	69.28575	378.300
14. Երկրորդ լույսի բրգածն երդիկ					
1	Այլումինե, կաղնեգույն պրոֆիլներից, ջերմակամրջակով երդիկ թրծած ապակուց, բրգածն	մ ²	47.8	95	4541.000
2	Երդիկի ներքնամաս կաղնեգույն պրոֆիլներից, թրծած ապակուց	մ ²	35.2	60	2112.000
15. Ներքին մետաղապլաստե դռներ					
1	Մետաղապլաստե, կաղնեգույն պրոֆիլներից, միափեղկ խուլ դռներ, ներառյալ սարքերը (0,9x2,1մ 11 հատ, 0,7x2,1մ 6 հատ)	մ ²	29.61	45	1332.450
2	Մետաղապլաստե, կաղնեգույն պրոֆիլներից, երկփեղկ խուլ դռներ, ներառյալ սարքերը (1,2x2,1մ 3 հատ, 1,4x2,1մ 2 հատ)	մ ²	13.44	45	604.800
Ընդամենը 15՝					1937.250
16. Ներքին վիտրաժներ					
1	Մետաղապլաստե, կաղնեգույն պրոֆիլներից, ապակեփաթեթով վիտրաժ, ներկառուցված միափեղկ դռնով և վերնափեղկով (3,0x2,4մ) (խուլ վիտրաժ՝ 5,1մ ² , բացվող դուռ՝ 2,1մ ²)	մ ²	7.2	30.666672	220.800
2	Թրծած 12մմ ապակուց վիտրաժ, ներկառուցված երկփեղկ դռնով (վիտրաժ՝ 10,14մ ² , դուռ՝ 4,16մ ²)	մ ²	14.3	50	715.000
3	Դռան մեխանիզմ	կ-տ	1	120	120.000
17. Մետաղական ճաղավանդակով դռնակ					
1	Մետաղական ճաղավանդակով դռնակի պատրաստում և մոնտաժում (խողովակ՝ 60x40x2,5մմ 21,175կգ, 50x30x2մմ 15,38կգ, 20x20x2մմ 13,56կգ, 15x15x1,5մմ 4,15կգ, անկյունակ 50x50x5մմ 0,38կգ)	տ	0.055	588.590041	32.372
2	Ծխնի	հատ	2	0.57068235	1.141
3	Պտուտակ L=100մմ	հատ	9	0.11413647	1.027
4	Մետաղական ճաղերի ներկաստառում նախաներկով	մ ²	2.15	0.309524437	0.665
5	Նույնի երկշերտ յուղաներկում	մ ²	2.15	1.082058226	2.326
18. Պատուհաններ (28 հատ)					
1	Մետաղապլաստե, կաղնեգույն պրոֆիլներից, ապակեփաթեթով պատուհաններ, ներառյալ սարքերը, բացվող	մ ²	27.08	40	1083.200
2	Նույնը, չբացվող	մ ²	39.68	35.2	1396.736
3	Ներքին պլաստմասսայե պատուհանագոգերի տեղադրում	մ ²	11.67	2.9268732	34.157
4	Պլաստմասսայե կաղնեգույն պատուհանագոգերի արժեքը 250մմ լայնությամբ	մ	36.6	2.533829634	92.738
5	Նույնը, 300մմ լայնությամբ	մ	8.4	3.047443749	25.599
Ընդամենը 18՝					2632.429
19. Հատակներ					
1	Հատակների քարե սալիկների վերականգնում	մ ²	70	16.56914548	1159.840
2	Հատակների քարե սալիկների հղկում	մ ²	782.7	7.6393135	5979.291
3	Մանրատախտակե հատակների հղկում	մ ²	133	0.639686961	85.078
4	Նույնի լաքապատում	մ ²	133	0.555157501	73.836
5	Հատակների ջրամեկուսացում 2 շերտ իզոգամով	մ ²	147.78	3.835683952	566.837

6	Զեմենտավազե շաղախից հարթաշերտ H=50մմ	մ ²	700	1.786569092	1250.598
7	Հատակների երեսպատում կերամիկական սալիկներով, սոսնձով	մ ²	12.23	6.697124125	81.906
8	Հատակների երեսպատում գրանիտե սալիկներով	մ ²	55.3	27.82414025	1538.675
9	Հատակների վերականգնում գրանիտե սալիկներով (8,0+3,3)	մ ²	11.3	27.82414025	314.413
10	Հատակների երեսպատում կերամագրանիտե սալիկներով, սոսնձով	մ ²	240.3	9.840442509	2364.658
11	Հատակների երեսպատում բազալտե սալիկներով	մ ²	25.03	12.16461657	304.480
12	Լամինաթե հատակ շրիշակների տեղադրմամբ	մ ²	145.68	4.822475979	702.538
13	Մանրատախտակե հատակի վերականգնում շրիշակների տեղադրմամբ	մ ²	20	6.772159667	135.443
14	Նոր մանրատախտակե հատակ շրիշակների տեղադրմամբ	մ ²	189	6.772159667	1279.938
15	Մանրատախտակե հատակների հղկում	մ ²	209	0.639686961	133.695
16	Մանրատախտակե հատակների լաքապատում, ներառյալ շրիշակները	մ ²	230	0.555157501	127.686
17	Շրիշակներ կերամագրանիտե սալիկներից H=10սմ	մ ²	10.9	11.23575868	122.470
18	Փայտե շրիշակներ δ=20մմ, H=80մմ	մ ²	230	0.555157501	127.686
19	Պլաստմասսայե շրիշակներ տակդիրով	մ	168.2	0.779540676	131.119
20	Շրիշակներ գրանիտե սալերից δ=20մմ, H=100մմ (նոր և վերականգնվող հատակների)	մ ²	4.7	39.22407082	184.353
20. Ներքին հարդարման աշխատանքներ					
1	Պատերի բարձրորակ սվաղ գաջե շաղախով	մ ²	1219.92	3.037070348	3704.983
2	Պատերի բարձրորակ սվաղ ցեմենտավազե շաղախով	մ ²	117.25	2.459805936	288.412
3	Պատերի երեսպատում տրավերտինե սալերով δ=20մմ	մ ²	100.7	24.83899496	2501.287
4	Պատերի երեսպատում տրավերտինե սալերով δ=20մմ (ցուցասրահ և դահլիճ), վերականգնում	մ ²	30	24.83899496	745.170
5	Պատերի երեսպատում հախճասալիկներով	մ ²	109.94	6.574984305	722.854
6	Պատերի երեսպատում տուֆե սալերով δ=20մմ (բաց պատշգամբ)	մ ²	20	15.94658611	318.932
7	Պատերի բարձրորակ ներկում լատեքսային հիմքով ջրակայուն ներկով, մածկապատմամբ	մ ²	1205.92	1.593080333	1921.127
8	Նույնը, գիպսաստվարաթղթե սալերից միջնորմների	մ ²	180	1.244283854	223.971
9	Շեպերի բարձրորակ սվաղ գաջե շաղախով	մ ²	59.25	4.458201464	264.148
10	Նույնի բարձրորակ ներկում լատեքսային հիմքով ջրակայուն ներկով, մածկապատմամբ	մ ²	59.25	1.593080333	94.390
11	Առաստաղների բարձրորակ սվաղ գաջե շաղախով	մ ²	651.48	3.350083819	2182.513
12	Սվաղված առաստաղների բարձրորակ ներկում լատեքսային հիմքով ջրակայուն ներկով, մածկապատմամբ	մ ²	651.48	1.858533456	1210.797
13	Գիպսաստվարաթղթե սալերից առաստաղների բարձրորակ ներկում լատեքսային հիմքով ջրակայուն ներկով, մածկապատմամբ	մ ²	919.72	1.359887209	1250.715
21. Արտաքին հարդարման աշխատանքներ					

1	Պատերի բացակայող տուֆե սալիկներով երեսպատվածքի վերականգնում լարացանցի տեղադրմամբ (100x100մմ)	մ ²	18	17.23221931	310.180
2	Պատերի սրբատաշ տուֆե երեսային շարվածքի վերականգնում	մ ²	70	11.28492879	789.945
3	Պատերի երեսպատում տուֆե սալիկներով δ=20մմ լարացանցի տեղադրմամբ (100x100մմ)	մ ²	166.3	17.23221931	2865.718
4	Պատերի երեսպատում բազալտե սալիկներով δ=20մմ լարացանցի տեղադրմամբ (100x100մմ)	մ ²	149.6	24.53744641	3670.802
5	Բազալտե երիզներ 80մմ լայնությամբ (236,5զծմ) δ=30մմ	մ ²	18.88	13.89905996	262.414
6	Դռների և պատուհանների շեպերի երեսպատում բազալտե սալիկներով δ=20մմ լարացանցի տեղադրմամբ (100x100մմ)	մ ²	0.35	24.53744641	8.588
7	Նույնը, տուֆե սալիկներով	մ ²	1	17.23221931	17.232
8	Արտաքին պատերի մաքրում հղկմամբ	մ ²	100	7.6393135	763.931
9	Ուժեղացված պատերի բարելավված սվաղ ցեմենտավազե շառահատ	մ ²	264.2	1.476725636	390.151
10	Ուժեղացված պատերի ծեփամածկում	մ ²	196.2	0.340414297	66.789
11	Նույնի ներկում ջրակայուն ճակատային ներկով	մ ²	196.2	0.704275453	138.179
12	Ներքին գետնախարսխի սվաղում ցեմենտավազե շաղախով, բաց ամրանների հղկմամբ մետաղական խողանակով և ամրանացանցի տեղադրմամբ	մ ²	50	3.554506528	177.725
13	Արտաքին պատուհանագոգերի տեղադրում բազալտե 50x150մմ սալերից (45զծմ)	մ ²	6.75	19.60588346	132.340
14	Գոյություն ունեցող մետաղական ճարտարապետակա փոքր ձևերի մաքրում և յուղաներկում նախաներկմամբ	մ ²	15	2.271291726	34.069
15	Գույքային տախտակամածի տեղադրում և քանդում	մ ² ճակատ	165	0.716967859	118.300
16	Նույնի տեղափոխում 9 անգամ	մ ² ճակատ	165	4.6620967	769.246
22. Հովար					
1	Հովարի մետաղական հիմնակմախքի պատրաստում և մոնտաժում (խողովակ 40x25x2.5մմ 45,54կգ, պողպատաշերտ 40x4մմ (8զծմ) 10կգ)	տ	0.056	507.0281911	28.394
2	Հիմնակմախքի ներկաստառում նախաներկով	մ ²	3	0.14777158	0.443
3	Նույնի երկշերտ յուղաներկում	մ ²	3	1.086089526	3.258
4	Ինքնապարուրակվող պտուտակ L=200մմ	հատ	14	0.11413647	1.598
23. Արտաքին աստիճաններ, թեքահարթակ					
1	Բազալտե տեղահանված աստիճանասալերի տեղադրում (վերականգնում) B=380մմ, L=2,4մ (12 հատ)	մ ²	10.95	8.259730244	90.444
2	Նույնը, B=100մմ, L=2,4մ (16 հատ)	մ ²	3.84	8.259730244	31.717
3	Նույնը, աստիճանների կողային հատվածների սալերի	մ ²	0.9	16.97430736	15.277
4	Բազալտե խճից նախաշերտ H=150մմ	մ ³	1.6	11.95730059	19.132
5	Բետոնե ամրանավորված նախաշերտ H=100մմ B25 դասի բետոնից	մ ³	1.06	48.08148789	50.966

6	Ամրանացանց Փ6Acl դասի ամրանից 200x200մմ բջիջով	տ	0.026	317.0482864	8.243
7	Ցեմենտավազե շաղախից հարթաշերտ H=40մմ	մ ²	11.25	30.51661369	343.312
8	Մետաղական ճաղավանդակների պատրաստում և մոնտաժում (խողովակ 40x20x2մմ և 20x20x2մմ)	տ	0.042	513.4958249	21.567
9	Մետաղական ճաղաշարի ներկաստառում նախաներկով	մ ²	1.15	0.14777158	0.170
10	Նույնի երկշերտ յուղաներկում	մ ²	1.15	1.086089526	1.249
11	Գրունտի քանդում ձեռքով	մ ³	21	2.217215	46.562
12	Քանդած բազալտե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով	մ	25	1.8877661	47.194
13	Բազալտե խճից նախաշերտ թեքուղու տակ	մ ³	3.36	7.278817143	24.457
14	Նախաշերտ թեքահարթակի տակ H=10սմ B7,5 դասի բետոնից, ամրանավորմամբ	մ ³	2.4	33.30789149	79.939
15	Ամրանացանց Փ8A500C դասի ամրանից 200x200մմ բջիջով	տ	0.098	313.8752925	30.760
16	Թեքահարթակի երեսպատում բազալտե սալերով δ=30մմ	մ ²	24	13.30598127	319.344
17	Թեքուղու հենապատ B7,5 դասի խամքարաբետոնից	մ ³	1.95	33.64736372	65.612
18	Հենապատի երեսպատում բազալտե սալերով δ=30մմ	մ ²	3.4	24.96386026	84.877
19	Բազալտե եզրաքարերի տեղադրում թեքահարթակի եզրամասում 10x15սմ	մ	24	3.269788892	78.475
20	Քանդած բազալտե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով	մ	25	3.157988561	78.950
21	Մայթեզրի բազալտե թասակ 150x100մմ (24գծմ)	մ ²	3.6	30.42645177	109.535
22	Թեքահարթակի բռնածողերի մոնտաժում ալյումինե խողովակներից	մ	48	21.17522437	1016.411
24. Արտաքին պատերի ջրամեկուսացման աշխատանքներ					
1	Արտաքին պատերի եզրագծով B=1,2մ լայնությամբ լիցքային գրունտի քանդում քսկավատորով, կողից	մ ³	80.8	0.4607179	37.226
2	Նույնը, ձեռքով	մ ³	20	2.217215	44.344
3	Հողի մաքրում պատերի վրայից և փոշեզրկում L=84մ, H=1մ	մ ²	84	0.443443	37.249
4	Պատերի սվաղ ցեմենտավազե շաղախով	մ ²	84	1.407330662	118.216
5	Պատերի և խորշերի ջրամեկուսացում 2 շերտ իզոգամով (84+28)	մ ²	112	3.855889348	431.860
6	Կողալիցքի գրունտի հետլիցք ձեռքով, տոփանմամբ	մ ³	100.8	0.927199	93.462
25. Սալվածք					
1	Գրունտի տոփանում խճով	մ ²	170	0.291529685	49.560
2	Բազալտե խճից նախաշերտ H=140մմ (580մ ²)	մ ³	81.2	7.278817143	591.040
3	Ամրանավորված բետոնե նախաշերտ H=100մմ B15 դասի բետոնից (445մ ²)	մ ³	44.5	38.61660698	1718.439
4	Լարացանցի արժեքը 100x100մմ	մ ²	445	0.660850161	294.078
5	Երեսպատում պահեստավորված բազալտե սալերով δ=30մմ ցեմենտավազե 40մմ շաղախով	մ ²	445	5.613183188	2497.867
6	Բազալտե եզրաքարերի տեղադրում 150x250մմ բետոնե հիմքով (49,5մ ²)	մ	165	15.84240819	2613.997

7	խոշորահատիկ ասֆալտբետոնե ծածկույթ H=50մմ	մ ²	135	3.873347174	522.902
8	Մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթ H=30մմ	մ ²	135	2.806869695	378.927
9	Հավաքովի բետոնե եզրաքարերի տեղադրում 150x250մմ բետոնե հիմքով (21,45մ ²)	մ	71.5	13.17267399	941.846
2. Ներքին ջրամատակարարման ցանց					
1	Պոլիպրոպիլենե խողովակների մոնտաժում Φ 20x2,3մմ, ձևավոր մասերի տեղադրմամբ, լվացմամբ, փորձարկմամբ և ախտահանմամբ	մ	34	2.514602267	85.496
2	Նույնը, Φ 32x2,9մմ	մ	5	1.888082032	9.440
3	Պողպատե խողովակներ Φ 50մմ, ձևավոր մասերի տեղադրմամբ և փորձարկմամբ	մ	65	2.21041267	143.677
4	Փական ջրային Φ 15մմ	հատ	7	1.59791058	11.185
5	Նույնը, Φ 25մմ	հատ	1	2.316970341	2.317
6	Փական Φ 50մմ	հատ	3	7.140067475	21.420
7	Ջրաչափի ապամոնտաժում ջրահորում Φ 40մմ	հատ	1	0.348203	0.348
8	Չտիչի ապամոնտաժում ջրահորում Φ 40մմ	հատ	1	1.286985	1.287
9	Նույն ջրաչափի տեղադրում	հատ	1	0.549768	0.550
10	Նույն զտիչի տեղադրում	հատ	1	2.1431275	2.143
11	Փական հրդեհային պահարանով (20մ բետոնե ճկախողովակով)	կ-տ	5	46.34959708	231.748
12	Լվացարանի ծորակ	հատ	9	3.332784924	29.995
13	Պողպատե խողովակների երկշերտ յուղաներկում	մ ²	13	1.082058226	14.067
14	Ֆիտինգներ և ձևավոր մասեր	հատ	80	0.11413647	9.131
3. Ներքին կոյուղու ցանց					
1	Անցքերի բացում ծածկերում Φ 300մմ և վերականգնում խողովակները տեղադրելուց հետո	հատ	4	4.829538947	19.318
2	Անցքերի բացում պատերում Φ 300մմ և վերականգնում խողովակները տեղադրելուց հետո	հատ	3	1.434678114	4.304
3	Խրամուղու մշակում IV կարգի գրունտում 0,8÷0,9մ խորությամբ	մ ³	22	0.59782975	13.152
4	Գրունտի հետլիցք տոփանմամբ	մ ³	17	0.3213414	5.463
5	Ավելորդ գրունտի բարձում ա/հնքնաթափի վրա և տեղափոխում 5կմ	մ ³	5	3.0012405	15.006
6	Ավազե նախաշերտ խողովակի տակ և սլաշտպանիչ շերտ վրայից (H=20սմ)	մ ³	4.4	4.30493084	18.942
7	Կոյուղու դիտահոր հավաքովի ե/բ էլեմենտներից Φ 1000մմ (H=0,8մ) (1 հատ)	մ ²	1.1	137.9162694	151.708
8	Թուջե մտոց Φ 700մմ	հատ	1	62.7750585	62.775
9	Սետաղական աստիճան	տ	0.01	399.477645	3.995
10	Դիտահորի ամրացման տարրեր	տ	0.02	376.650351	7.533

11	Պոլիվինիլբլորիդե խողովակների մոնտաժում խրամուղում Φ150մմ, փորձարկմամբ	մ	10	1.879718375	18.797
12	Նույնը, Φ100մմ	մ	12	1.245493907	14.946
13	Պոլիվինիլբլորիդե խողովակների մոնտաժում պատերի վրա Φ100մմ, փորձարկմամբ	մ	33	1.789872154	59.066
14	Նույնը, Φ50մմ	մ	15	1.141455986	17.122
15	Խեցե զուգարանակոնքի մոնտաժում	կ-տ	6	43.28517	259.711
16	Խեցե լվացարանակոնքի մոնտաժում	կ-տ	9	26.94423314	242.498
17	Ստուգիչներ կանգնակների վրա Φ100մմ	հատ	2	2.052102985	4.104
18	Պոլիվինիլբլորիդե անցում Φ100→50	հատ	8	0.319582116	2.557
19	Պոլիվինիլբլորիդե եռաբաշխիկ Φ100մմ	հատ	13	0.741887055	9.645
20	Պոլիվինիլբլորիդե անկյունակ Φ50մմ	հատ	14	0.273927528	3.835
21	Նույնը, Φ100մմ	հատ	8	0.513614115	4.109
4. Կաթսայատան սարքավորումներ և խողովակաշար					
1	Չափված աշխատող պատի կոնդենսացիոն ջրատաքացուցիչ կաթսա N=85կվտ, Q=73100կկ/ժամ (Rendemax R40/85)	կ-տ	2	1689.520831	3379.042
2	Շրջանառու պոմպ Redrolla CPm132A, G=5մ ³ /ժ, H=12մ, էլ.շարժիչով N=0,6կվտ	հատ	2	158.2175595	316.435
3	Կեղտազտիչ 100-200	կ-տ	1	93.980789	93.981
4	Բաշխիչ սանրիկ մատուցող D=150մմ, 500մմ	կ-տ	1	153.0640555	153.064
5	Բաշխիչ սանրիկ հետադարձ D=150մմ, 500մմ	կ-տ	1	153.0640555	153.064
6	Ջրի մշակման էլ.մագնիսական սարք AMO-25-Y4	հատ	1	60.158646	60.159
7	Ընդարձակման բաք V=100մ	հատ	1	88.8812945	88.881
8	Լվացարան մետաղական	հատ	1	10.5035731	10.504
9	Մաքուր օդի մուտք D=100մմ	մ	4	5.01469101	20.059
10	Նույնը, D=150մմ	մ	3	7.384040912	22.152
11	Ծխնելույզ D=100մմ	մ	4	5.01469101	20.059
12	Նույնը, D=150մմ	մ	8	7.384040912	59.072
14	Պողպատե խողովակ Φ20մմ	մ	10	1.035213233	10.352
15	Նույնը, Φ32մմ	մ	12	1.411863584	16.942
16	Նույնը, Φ50մմ	մ	15	2.07838867	31.176

17	Փական Փ20մմ	հատ	6	4.126864667	24.761
18	Նույնը, Փ25մմ	հատ	2	4.606237841	9.212
19	Նույնը, Փ32մմ	հատ	10	5.59922513	55.992
20	Նույնը, Փ50մմ	հատ	2	7.140067475	14.280
21	Հետադարձ փական Փ32մմ	հատ	2	6.660694301	13.321
22	Դատարկման փական	հատ	1	4.5719969	4.572
23	Պողպատե խողովակների երկշերտ յուղաներկում	մ ²	5	1.082058226	5.410
5. Ջեռուցում					
1	Ալյումինե ջեռուցիչ սարքերի մոնտաժում	էկմ	225	0.6581065	148.074
2	Ալյումինե ջեռուցիչ մարտկոցների արժեքը H=350մմ (93վտ)	սեկց	414	4.22304939	1748.342
3	Նույնը, H=500մմ (133վտ)	սեկց	432	4.417081389	1908.179
4	Փական ջեռուցիչ սարքի մոտ Փ15մմ	հատ	63	4.195346549	264.307
5	Փական ջերմակարգավորիչ սարքի մոտ Փ15մմ	հատ	63	4.126864667	259.992
6	Փական օդահեռացման Փ15մմ	հատ	63	0.439744987	27.704
7	Ջեռուցիչ սարքերի միացման կեռեր	հատ	175	0.479373174	83.890
8	Պոլիարոպիլենե խողովակ խողովակաձև մեկուսիչով, ձևավոր մասերի տեղադրմամբ և փորձարկմամբ Փ63x10,5մմ (Փ40)	մ	45	4.588701593	206.492
9	Նույնը, Փ50x8,3մմ (Փ38)	մ	78	3.815248916	297.589
10	Նույնը, Փ40x6,7մմ (Փ28)	մ	60	2.816258063	168.975
11	Նույնը, Փ32x5,4մմ (Փ23)	մ	150	2.439425094	365.914
12	Նույնը, Փ25x4,2մմ (Փ18)	մ	110	2.541076198	279.518
13	Պոլիարոպիլենե խողովակ Փ20x3,4մմ (Փ13)	մ	430	1.38574461	595.870
14	Ֆիտինգներ և ձևավոր մասեր Փ13+Փ40մմ	հատ	650	0.091309176	59.351
15	Փական Փ15մմ	հատ	8	1.586496933	12.692
16	Նույնը, Փ20մմ	հատ	6	1.837597167	11.026
17	Նույնը, Փ32մմ	հատ	2	3.30995763	6.620
6. Օդափոխության համակարգ					
1	Հակաանձրևային շերտափեղկ PZ 50-30 (REMAK)	հատ	1	33.02398	33.024
2	Նույնը, PZ 40-30 (REMAK)	հատ	1	29.762938	29.763
3	Զգափական սերվո մատուցմամբ KF5 ներդիրով LKSF 50-30 (REMAK)	հատ	1	167.2431365	167.243
4	Նույնը, LKSF 40-30 (REMAK)	հատ	1	161.8080665	161.808

5	Գրպանային զտիչ KFD 50-30 (REMAK)	հատ	1	56.9245885	56.925
6	Նույնը, KFD 40-30 (REMAK)	հատ	1	53.6635465	53.664
7	Էլեկտրական օդատաքացուցիչ EOZ 50-30, N=15կվտ/ժամ (REMAK)	հատ	1	354.6538265	354.654
8	Նույնը, EOZ 40-30, N=15կվտ/ժամ (REMAK)	հատ	1	343.7836865	343.784
